ՄԱՄՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱՌԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում, նախագահությամբ Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոլատյանի, տեղի ունեցավ վարդապետական թեկնածուների բանավոր պաշտպանություն:

Պաշտպանությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմը և բազմաթիվ հյուրեր:

Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը, Տ. Արտակ աբեղա Տիգրանյանը, Տ. Գուրգեն աբեղա Աղապապյանը և Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանը նախապես իրենց թեկնածությունները ներկայացրել էին երջանկահիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմվել էր հանձնաժողով՝ գլխավորությամբ Տ. Շահե արքեպս. Սճեմյանի (հանձնաժողովի կազմում էին նաև Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը, Մատենադարանից՝ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը), որը նախապես քննելով թեկնածուները՝ կենսագիր էր ներկայացրել Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոլատյանին:

Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը: Ապա հանձնաժողովի նախագահ Տ. Շահե արքեպս. Սճեմյանը ներկաների ուշադրությանը հանձնեց հանձնաժողովի ընդհանուր կարծիքը Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանի «Քրիստոս Ղուրանի մեջ» թեկի վերաբերյալ: Այնուհետև իր թեկի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանը:

Մակար Հայր Սուրբի պաշտպանությունից հետո հանձնաժողովի անդամ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը ներկայացրեց հանձնաժողովի կարծիքը Տ. Արտակ աբեղա Տիգրանյանի «Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանց. կյանքը և

հոգևոր-գիտական գործունեությունը» թեկի վերաբերյալ։ Ապա թեկի բանավոր պաշտպանությամբ հանդես եկավ Հայր Արտակը։

Այնուհետև Տ. Հակոբ եպս. Գլընճյանը ներկայացրեց Տ. Գուրգեն աբեղա Աղապապյանի թեկի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը։ Տ. Գուրգեն աբեղա Աղապապյանը սկսեց իր թեկի բանավոր պաշտպանությունը, որի թեման էր «Մխալչխա»-ն։

Ապա հանձնաժողովի նախագահ Տ. Շահե արքեպս. Սճեմյանը ներկայացրեց Տ. Զարեհ աբեղա Կաբաղյանի թեկը՝ «Թորգոմ Պատրիարք Գուշակյանի կյանքը և հոգևոր-գիտական ժառանգությունը»։

Թեկերի բանավոր պաշտպանությունից հետո Տ. Շահե արքեպս. Սճեմյանը հրապարակեց հանձնաժողովի դրական կարծիքը՝ աբեղաներին վարդապետական աստիճան շնորհելու մասին։

Հանդիսության վերջում Կաթողիկոսական Տեղապահն իր շնորհավորանքի և օրհնության խոսքն ուղղեց թեկերը հաջողությամբ պաշտպանած երիտասարդ աբեղաներին՝ մեծապես գնահատելով նրանց կատարած աշխատանքները։ Երկու օր հետո, հոկտեմբերի 10-ին, երեկոյան, Մայր Աթոռում կատարվեց «Կանոն մասնավոր իշխանության» վարդապետական տվչության կարգի արարողությունը։ Վարդապետական աստիճանի շնորհումը կատարեց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոկապալյանը։

ՏՐԱՆՏ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ
ՃԵՄԱՐԱՆԻ Ք. ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ